

Հաշիվների բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր

### **Ֆիզիկական անձանց հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր**

- Անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ\*,
- Հանրային ծառայությունների համարանիշ կամ ԶԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք (ՀՀ ռեզիդենտների համար),
- Իրական շահառու(ներ)ի (առկայության դեպքում) անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի պատճենը ,

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- Բանկային հաշվի բացման և սպասարկման դիմում–հայտ (օֆերտա),
- ՕՐՀՅԱ հարցաթերթիկ (առաջին անգամ Բանկ դիմելիս):

\*Մինչև 14 տարեկան անչափահաս անձանց համար պահանջվում է անձի ծննդյան վկայականը , նրա օրինական ներկայացուցիչներից մեկի անձը հաստատող փաստաթուղթը և վերջինիս համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը:

### **Անհատ ձեռներեցների հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր**

- Անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ,
- Հանրային ծառայությունների համարանիշ կամ ԶԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք,
- Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք ,
- Հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր,
- Իրական շահառու(ներ)ի (առկայության դեպքում) անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի պատճենը,

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- Բանկային հաշվի բացման և սպասարկման դիմում–հայտ (օֆերտա),
- ՕՐՀՅԱ հարցաթերթիկ (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- Ստորագրությունների և կնիքի նմուշի քարտ (հաճախորդի ցանկությամբ),

### **Ռեզիդենտ իրավաբանական անձի հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր**

- Կանոնադրություն
- Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք
- Գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր
- Իրավասու մարմնի (ռեեստրավարի կամ գրանցող այլ մարմնի) կողմից տրամադրված տեղեկություններ՝ 10 և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տիրապետող բաժնետերերի, մասնակիցների մասին (եթե նման տեղեկություններ առկա չեն հիմնադիր փաստաթղթերում), ներառյալ անձը հաստատող փաստաթղթի տվյալները: Բաց բաժնետիրական ընկերությունների դեպքում սույն կետում նշված

տեղեկությունները չեն պահանջվում, եթե ներկայացվում է կարգավորվող բորսայում  
ցուցակված լինելու մասին տեղեկատվություն,

- Կանոնադրությամբ սահմանված դեպքերում հիմնադրի կամ համապատասխան իրավասու  
մարմնի համաձայնությունը հաշիվ բացելու վերաբերյալ (Պետական (համայնքային)  
կառավարչական հիմնարկի, ՊՈԱԿ-ի համար)
- Իրական շահառու(ներ)ի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի պատճենը,

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- Բանկային հաշվի բացման և սպասարկման դիմում–հայտ (օՖերտա)
- ՕՅՀՅԱ հարցաթերթիկ (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- Ստորագրությունների և կնիքի նմուշի քարտ (Պետական (համայնքային) կառավարչական  
հիմնարկի, ՊՈԱԿ-ի համար, կանոնադրությամբ սահմանված դեպքերում, հաստատված  
հիմնադրի կամ համապատասխան իրավասու մարմնի կողմից)

***\*\* Մասնկության հատուկ հաշիվ բացելու համար ի լրումն վերոնշյալ փաստաթղթերի ներկայացվող  
փաստաթղթեր և տեղեկություններ***

- Մասնկ ճանաչելու մասին դատարանի որոշում,
- Մասնկության կառավարիչ նշանակելու մասին դատարանի որոշում,
- Մասնկության կառավարիչի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող  
անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր

**Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր**

- Կանոնադրություն կամ կանոնադրությանը փոխարինող փաստաթուղթ,
- Գրանցման վերաբերյալ փաստաթուղթ՝ տրված տվյալ երկրի իրավասու մարմնի կողմից,
- Իրավասու մարմնի որոշում(ներ)ը կամ լիազորագիրը (լիազորագրերը) հաշվով գործարքներ  
կատարելու համար (չի պահանջվում, եթե հաշվով գործարքներ կատարելու է հիմնադրի  
փաստաթղթերով լիազորված ղեկավար անձը),
- Գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն  
ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր
- Գրանցող գործակալի կողմից թողարկված վկայագիր՝ գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի,  
10 և ավել տոկոս ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի  
տիրապետող բաժնետերերի մասին, կամ «ընկերության կարգավիճակի և/կամ ղեկավար  
անձանց մասին վկայագիր» (Certificate of Incumbency), որը պարունակում է նշված  
տեղեկատվությունը,
- 10 և ավել տոկոս ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի  
տիրապետող անձանց և իրական շահառուների նույնականացման համար անհրաժեշտ  
փաստաթղթերի (ֆիզիկական անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ,  
իրավաբանական անձանց՝ կանոնադրություն կամ դրան փոխարինող փաստաթուղթ և  
գրանցման վերաբերյալ իրավասու մարմնի կողմից տրված փաստաթուղթ) պատճենները՝  
հաստատված ընկերության իրավասու անձի /մարմնի կողմից, կամ պատշաճ կերպով  
վավերացված

- Իրական շահառու(ներ)ի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի պատճենը

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- Բանկային հաշվի բացման և սպասարկման դիմում–հայտ (օֆերտա)
- ՕՐՀՅԱ հարցաթերթիկ (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- Ստորագրությունների և կնիքի նմուշի քարտ

### Հայաստանում օտարերկրյա պետության դեսպանության և հյուպատոսության հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ

- ՀՀ-ում հավատարմագրված լիսենյու վերաբերյալ փաստաթուղթ,
- Դեսպանի կամ հյուպատոսի նշանակման վերաբերյալ իրավասու մարմնի որոշումը (եթե դեսպանի կամ հյուպատոսի վերաբերյալ տվյալները նշված չեն ՀՀ-ում հավատարմագրված լիսենյու վերաբերյալ փաստաթղթում),
- Դեսպանի կամ հյուպատոսի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- Բանկային հաշվի բացման և սպասարկման դիմում–հայտ (օֆերտա)
- ՕՐՀՅԱ հարցաթերթիկ (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- Ստորագրությունների և կնիքի նմուշի քարտ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բանկի համար ընդունելի են ՀՀ կառավարության որոշմամբ անձը հաստատող փաստաթուղթ համարվող փաստաթղթերը
2. Լիազորված անձի առկայության դեպքում ներկայացվում է նաև լիազորված անձի անձը հաստատող պաստաթուղթը
3. Բանկը անհրաժեշտության դեպքում կարող է հաճախորդից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:
4. Ներկայացվում են բոլոր նշված փաստաթղթերի բնօրինակները (եթե առկա չէ նշում պատճենը ներկայցնելու հնարավորության վերաբերյալ), կամ փաստաթղթերի պատշաճ վավերացված պատճենները, եթե Բանկը չի կարող դրանք ստանալ պաշտոնական հրապարակված կայքերից/բազաններից (Օրինակ՝ <https://www.sso.am>, <https://www.e-register.am>, [www.datalex.am](http://www.datalex.am), [www.azdarar.am](http://www.azdarar.am), Նորք տեղեկատվական բազա և այլն):

5. Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը (ինչպես բնօրինակ, այնպես էլ պատճեն) պետք է լինեն պատշաճ վավերացված: Ընդ որում պատշաճ վավերացում է համարվում

1) ապոստիլով կամ տվյալ պետության իրավասու մարմնի կողմից վավերացումը, իսկ ԱՊՀ երկրների և Վրաստանի դեպքում՝ Նոտարական վավերացումը, կամ

2) այլ պետության տարածքում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից վավերացումը:

6. Բանկը կարող է պահանջել օտարալեզու **փաստաթղթեր**՝ Նոտարական վավերացմամբ **թարգմանված**:

5. Բանկի հայեցողությամբ նշված **փաստաթղթերը**, (բացառությամբ՝ անձը հաստատող փաստաթղթի և Պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի) կարող են չպահանջվել, եթե հաճախորդը Նախկինում ներկայացրել է այն, և այն վավեր է հաշվի բացման պահին: